զի՞ երես տվիր Հայերուդ, վասն է՞ր ոչ զապտ անել
տաս. թէ ոչ կասիս՝ զվնասն դու կրելոց ես, զքեզ
զիտեա՛յ: Վասն որոյ և նա ի բարկութիւն շարժեալ,
ասացեալ՝ Այլ ոչ գայ վէզիրն, զիմ գիտածս առնեմ:
Եւ ի վերոյ գրեցաւ ժողով և սինհոդոս իշխանացն
քաղաքիս և կատաղութիւն. ի միմեանս պարփակեալք
կցեալք, երեկոյ և առաւօտ խորհուրդ և մուշավէրէ՝
թէ զի՞ գտցեն բանալիս նաև պատճառս ի վերայ Թու-
մային, զի կաղացուսցեն աքսորմամբ և կամ սպան-
մամբ: Բայց մինչև ցայժմ ի քաղաքս չտեսին համ-
բաւ չարութեան նորա կամ թէ լսեալ էին զպակա-
սութիւն օրինաց նորա. նա և յետ և յառաջ Ի օր կա-
ցաւ աստ: Պատճառ իմն իրաւի թէ Առ ազգս մեր զոչ
եղեալն արար, որ զհարկն յաւելցոյց, նաև զեկեղե-
ցոյ իրաւունքն ևս յափշտակեաց ընդ աթոռոյն, և թէ
զԵրուսաղէմ ի պէրաթ գրեաց, հարկատու առնէ զնա.
ոչ կամիմք, ժողովո՛ւրդք և ռամիկք, դուք ևս ընդ
մեզ լերո՛ւք: Սպանութեան երդումն արարեալ, ո-
մանց զտուն և զորդիս ի բերան տուեալ, այլոց քսակս
և փողս յիշեցուցեալ, կիսոց՝ եթէ կանգնիմք յոտին
և սպանեմք: Եւ երթային գային ի տիւան ի կախ ընդ
պատրիարքաւն յայտնի և ի ծածուկս, մինչև հաճե-
ցեալ լինէին զկամս ախմար փաշային՝ թէ զի՛ քսակն
մեք տացուք և քեզ ևս այսքան, նորա հնար մի:

Եւ ի վերջն վճիռ զայս հատին եթէ փռանկ է նա
և չաշուտ՝ այսինքն լրտես նոցայ. վկայել ետուն Ա.-
րեւելցի վաճառականաց ոմանց և հօճէթ արարին և ե-
դին ի բանտս մահապարտացն (3 Յուլիս, Շաբաթ): Եւ
այսու ոչ շատացեալ, հարեալք ի դիւէ՝ խորհէին սպա-
նանել զնա իշխանք քաղաքիս, յոյս ունելով զդրամ
Երուսաղէմին որ կայր ի մօտս իւրեանց, զոր յղեալ էր
Եղիազար վարդապետն եթէ հոգասցեն զբան Երուսա-